կան, եկեղեցական հայրերի և Ս. Գրքի մի տեսակ ներածութիւն է, նրանց ծագման, հեղինակների մասին տեղեկութիւններով։ Առաջին ստացողն է Գևորամ վարդապետ. 28բ. «Տր. ԱԾ ողորմեա ստացողի սորա Գևորամ վարդապետին և ծնողաց իւրոց և յիշողացդ, ամէն»։ Գրիչն է Մովսէս. 286բ. «ԶՄովսէս գրող գրոցս յիշեսջիք ի սբ. յաղաւթս ձեր աղաչեմ և զձեզ տր. յիշէ»։ Արդեօ՞ք սրանք Կեչառիսի միաբաններ են, և այնտե՞ղ է գրուած ձեռագիրը, ասել չենք կարող. բայց նրանք ժամանակով շատ հեռու չեն Կեչառեցու ժամանակից, քանի որ գրքի հեղինակ կամ խմբագրող Գրիգոր որդի Աբասայ ապրում էր ԺԳ. դարի երկրորդ տասնամեակում(*)։ Ապա գիրքն անցել է Կեչառեցուն, ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ մանր յիշատակարաններ իւր իսկ ձեռքով գրուած, Յա. «Ես. ԱԾ Մեսեայ և Մանուիէլին շնորհաւոր արասցէ զսա վգի. Խչտոյ», կամ աւելի պարզ 16ա. «զԽչտ. վգ. Կեչառվեցի ստացող սբ. տառիս յաղաւթս յիշեա»։

Բայց Կեչառեցին ինքն էլ իւր բաժինն է բերել տօնապատճառների գրականութեան մէջ. տարաբաղդաբար այդ աշխատութեան միայն բեկորներն են հասել մեզ, կցուած այժմ Էջմ. № 753 Նժ. ձեռագրին։ Այստեղ մի գլուխը վերնագրուած է. «Իմաստութի. հոգևոր վարդապետին Խաչատրոյ ասացեալ». սկս. «ԱԾային ամենառ(ատ) և ամենազաւր սքանչելագործ զաւրութբ.» Թերթերը յետ ու առաջ ընկած. 378բ-ի շարունակութիւնն է 390աբ., բայց դարձեալ թերի։ Մի ուրիշ գլուխ՝ 386բ. «Պատճառք Նոր Կիրակէին և աւետարանացն կարգացման սակաւ». սկս. «Ոմն յիմաստնոցն ասաց, ա. օրէնք ածայինք. իբրև զկենդանի մգ. մի են»։ Վերջում գրիչն աւելացնում է. «զոր և իմ լուսաւորիչն և ամենիմաստն . . . . (գովասանական խօսքեր) . . տրն. իմ և յոյս, ծնողն հոգևոր և երջանիկ վարդապետն Խաչատուր գիտնականն, ցանկացեալ ածագիծ. տառիցս, բազում ջանիւ և աշխատութբ. ի մի հաւաքեաց զբանս բազումս վարդապետաց, զոր և ես Թակարդապատեալս մեղաւք . . . Ստեփաննոս քահանայ . . . գրեցի զպատճառս ծննդեան Փրկչին մերոյ։

Կեչառեցու մի աշխատութիւնն էլ պահուած է Էջմ. № 2617/2154 ձեռագրի մէջ 413բ–415բ, այսպիսի վերնագրով. «Խչտուրոյ Կեչառուեցու ժողովել. ստոյգ օրինակէ վս. զլստն. այ. առ մզիկ. կուսածին թգին. քի. այ. մերյ.։ Զժմկն. եւ զթգն. համառօտիւք։ Աւծլն. ԱԾ եւ արրիչ յաւիտենից ծնանի . . .»։

Նախ ծննդեան ժամանակն է որոշում. «Ի թգւին համաձնեցոյց Օգոստեայ կայրի (s!) ի ԽԲ. (թէ ԺԲ.) ամին, եւ ի հրէից Հերովդի, ՅԼԲ.։ Եւ ի Պարսից Ար(շ)աւրի, ԻԱ.։ Եւ հայոց Աբգարու յերկրին, ը. որս եւ էին ամքն. յԱդամայ մինչև ցարդ եւս (!) :ա.: հրէակնեին քրs(=ու)նիկու։ Իսկ հ.իցն ոճի իճ զը։ Ըս. Ենանոսի, բղա։ եւ ըստ Ասորոց. բիզ. եւ ամն երկոտասա(ն) Լուսնեա, որ եւ Աւգոստոստ որ էր երկրորդ ինքնակալ զկինի Յուլիոսի, զոր ասեն փորահան»։ Ապա պատմում է Յիսուսի ծնունդը ողջայութեան աւետարանների ձևով, բայց տարբեր առասպելներով(*), թագաւորների գալուստ ու երկրպագութիւնը. «եւ զայս զեկոյց Սեկոնդոս իմաստուն եւ տեսանող եւ Լուկանոս գրեաց յԱսորոց առ կայսրն Աւգոստոս»։ Տարբեր է նաև Եգիպտոսում հիւրասիրութիւնը «առ այրի կնոջ մի, ազգաւ Ղպտի, եւ սա որ լցել. զջուրն ի կոնքն, լուաց ըս. օրինի զորովամիտ մարցասիրաց (!)։ Եւ ապա հանլ. ի ջրյն. Նրգոյն մանդլով պատլ. եւ գրկեալ զըզուանօք երգս քաղցրաձայն մատուցանէր եւ ասէր», գովասանական մի ներբող արևելեան ոճով մօրն ու որդուն ուղղուած։ Կուռքերի կործանումն է պատմում, ապա քաղաք մտնելիս եգիպտացիք որոնում են մանկան եւ չեն գտնում, «եւ ոչ որպէս (2-ի մէջ 9) անպէտ ստայօդ պատմելին. ասէ, զոր Մանիքեցիքն ողջայլե. աւետրն. կոչեն ի քէ.»։ Բայց գտնում են այրի կնոջը, որ ցոյց է տալիս «ի ձեռ ոսկոյ» «փոխել.» մանդիլը, և պարտիզում Նոր կանաչած 12 ծառերը, ուր թափել էր լուացման ջուրը։ Այդ ծառերը յետոյ բազմանում են, պարարտ ձիթապտղով, «որ պալասին կոչի», որով օրհնութեան իւղը կամ միւռոնն է կատարւում։

Այս քաղուածքը ցոյց է տալիս, որ Կեչառեցուն յայտնի էր ողջայութեան աւետարանի մի տարբեր փոփոխակ, որ յայտնի չէ դեռ ևս մեր բանասիրութեան, թէև մեծ աղերս ունի հրատարակուած խմբագրութիւնների հետ(**)։ Մի և նոյն ժամանակ բնորոշում է Ողբի և Աղէքսանդրի պատմութեան հետ նորա գրական սէրը դէպի վիպական–առասպելական նիւթերը։

Բայց Կեչառեցին աւելի յայտնի է մեր մատենագրութեան մէջ Սուտ Կալիսթինեսի Աղէքսանդրի վէպի կամ պատմութեան խմբագրութեամբ, զանձերով եւ տաղերով։ Տաշեան իւր յայտնի ուսումնասիրութեան մէջ(***) ցոյց է տուել, թէ այդ խմբագրութիւնը միանգամայն արտաքին է և թէ հին թարգմանութիւնը

(*) Նա ՈԿԶ (= 1217) թուին Սանահնի առաջնորդ էր իւր այնտեղ թողած արձանագրութեան համեմատ, իսկ 1219 թըւին անցնում է Հառիճոյ վանքը Էջմիածնի № 1382 ձեռագրի յիշատակարանի համեմատ (տ. Խաղբակեանք Ա. եր. 165)։ Բայց նա թաղուած է Սանահնում Ս. Աստուածածնի հիւսիսային պատի տակ. լայն, մեծ և տափակ գերեզմանաքարի վերայ գրուած է. «Գրիգոr սբ. վզայ. nr դի Աբ ասայ»։ Մահուան տարեթիւը չգիտենք։

(*) Սորա նման է Ոստանցի Սադաղա երէցի տաղը. Ձեռ. Էջմ. 222 Նժ. 76ա. Սիրով սիրելի որդին. Acr. Սադաղին է այս բանս։ Երրորդ տունն է. «Դողալով յայրըն մըտին, | Մանուկ խանձարրաւք տեսին. | ԱԾ խաչեալ ի փայտին | 'ւ արքայ նստեալ յաթոռին»։

(**) Անկանոն գիրք Ն. Կտակարանաց, Վենետիկ, 1898։

(***) Ուսումնասիրութիւն Սոտյն Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892։